Ե՞րբ է իմ երեխան դուրս գալու ELD ծրագրից:

Այն կոչվում է վերադասակարգում և տեղի է ունենում այն ժամանակ, երբ երեխան հասնում է նահանգի և շրջանի ներքոհիշյալ չափանիշներին: Բրբենքի ԴՄՇ-ի աշակերտները, ովքեր դպրոց են ընդունվում անգլերեն լեզվի սահմանափակ իմացությամբ, ծրագրից դուրս են գալիս (վերադասակարգվում են) 5-7 տարվա ընթացքում, կամ ավելի շուտ: Անգլերեն լեզվին մի փոքր տիրապետող երեխաներին հարկավոր է մի քանի տարվա ELD օգնություն:

Մեր նպատակն է անգլերեն սովորողներին դարձնել սահունությամբ խոսողների (լսել, խոսել, կարդալ և գրել) և տիրապետել նահանգային չափանիշներին կրթական ձեռքբերումների արագ հասնելու համար:

Ահա շրջանի վերադասակարգման չափանիշները.

- ELPAC քննություն. «լավ զարգացած» /4-րդ մակարդակի արդյունք
- Շրջանի և նահանգային քննություններ (SBAC) - ընթերցանության և գրավոր աշխատանքի դասարանի մակարդակի արդյունք
- Դասարանի մակարդակի գնահատականներ
- Ծնողի կարծիք. Հրավիրում ենք ծնողներին հայտնել իրենց կարծիքը, երեխայի պատրաստվածության վերաբերյալ

Լրացուցիչ տեղեկություն

ELD ծրագիրը հավասար իրավունք է տալիս երեխաներին մասնսկցել շնորհալի և տաղանդավոր (GATE) ծրագրում:

Անկարողունակություն ունեցող անգլերեն սովորողները հավասար իրավունք ունեն մասնակցել այլ ծրագրերի, որոնք համապատասխանում են իրենց Անձնական Ուսուցման ծրագրի (IEP) հետ:

Միջանկյալ, միջնակարգ դպրոցներ և ավելին –

Այն անգլերեն սովորողները, ովքեր դպրոց ը սկսել են տարրական դպրոցի ցածր դասարաններից, դուրս են գալիս ELD ծրագրից, մինչև միջանկյալ դպրոց սկսելը: Եթե երեխան ELD ուսուցում է ստանում միջանկյալ կամ միջնակարգ դպրոցում, ապա այն չի մտնի իր դասերի գրառման ցուցակում և չի ազդի համալսարան ընդունվելու վրա: 2018 թվականին Բրբենքի 5 տարով միջնակարգ դպրոցի աշակերտնետի 94.6%-ը ավարտել է այն: Միջնակարգ դպրոցի անգլերեն սովորողների 87.8%-ը ավարտում է այն:

Ռեսուրսներ ծնողների համար

- Անգլերեն Լեզվի Խորհրդատու Կոմիտե (ELAC). Առաջարկություններ, ռեսուրսներ և տեղեկություն: Տարեկան 4 ժողով գումարել:
- Անգլերեն Լեզվի Խորհրդատու ՇրջանայինԿոմիտե (DELAC). Հյուրընկալել burbankusd.org կայքը ամսաթվերը իմանալու համար
- Ծնողական երեկոներ - մաթեմատիկա, անգլերեն լեզու, տեխնոլոգիա և ավելին
- Ծնողական ժողովներ, դպրոցի հյուրընկալում, բուստեր ակումբ և PTA
- Թարգմանիչներ. կապնվել ELD կազմակեպչի հետ
- Բարեկեցության ծրագրեր և ծառայություններ. www.burbankusd.org/District/Department/Wellness-Programs-and-Services

Ու՞մ հետ կապնվել-դպրոցում և շրջանում

ELD ծրագրի վերաբերյալ լրացուցիչ հարցերի դեպքում խնդրում ենք կապնվել ձեր դպրոցի ELD մասնագետի հետ.
Լյութեր դպրոց. tracifellman@burbankusd.org
Ջորդան դպրոց. sonlayvorachak@burbankusd.org
Մյուիր դպրոց. jameskoontzeidratineo@burbankusd.org
Բրբենք միջնակարգ դպրոց. lauramessian@burbankusd.org
Ջոն Բրոզ միջնակարգ դպրոց. pamelazimny@burbankusd.org
Շրջանային գրասենյակ.
Հատուկ հանձնարարությամբ ուսուցիչ. ELD կազմակերպիչ jennifergoldenberg@burbankusd.org կամ զանգահարել 818-729-4495
Տարրական ուսուցման և դաշնային ծրագրերի վարիչ. peterknapik@burbankusd.org կամ զանգահարել 818-729-4482

Բրբենքի Դպրոցների Միացյալ Շրջան

Գրքույկ միջանկյալ և միջնակարգ դպրոցում անգլերեն լեզու սովորող աշակերտների ծնողների համար

ELD ծրագրի նկարագիր
ELD ուսուցում
EL ճանաչման գործընթաց
Վերադասակարգում

Կրթական գրասենյակ.

Դոկտոր Ռոբերտա Ռեյնոլդ, նախագահ
Դոկտոր Առնոլդ Աղախանյան, փոխ-նախագահ
Սթիվ Ֆրինտներ, քարտուղար
Շարլին Թաբետ, անդամ
Սթիվ Ֆրգսոն, անդամ

Ղեկավարություն.

Մաթ Հիլլ, գերատեսուչ
Շերոն Քուսեռ, գերատեսչի տեղակալ, Ուսումնական ծառայություններ
Դոկտոր Ջոն Պարամո, գերատեսչի տեղակալ և միջնակարգ ուսուցման վարիչ

Անգլերեն սովորողների ծրագրեր

Բրբենքի դպրոցների շրջանը ունի 2 ELD ծրագիր. **Կառուցվածքային Անգլերեն Լեզվի Ներթափանցման (SEI) և Երկկողմանի ներթափանցման ծրագիր (DI).**

- Կառուցվածքային Անգլերեն Լեզվի Ներթափանցման ուսումնական ծրագիրը և դասավանդումը նախատեսված են անգլերեն նոր սովորող աշակերտների համար: Աշակերտները խմբավորվում են ըստ լեզվի մակարդակի և ուսումնական կարիքների **իրենց դասարանում**: Դասարանները բաղկացած են անգլիախոս, սահուն անգլերեն խոսող և անգլերեն նոր սովորող երեխաներից (ELs): Նաև, նոր ձևավորվող (սկսնակ) անգլերեն սովորողները հաճախ լրացուցիչ օգնություն են ստանում ուսուցչի օգնականից: Այդ մակարդակի դասավանդման ժամանակ ուսուցումը *կարող է* կատարվել մայրենի լեզվով նրանց քաջալերելու, պարզաբանելու, ուղղություն ցույց տալու, աջակցելու և բացատրելու նպատակով: SEI ծրագրի նպատակն է անգլերեն լեզվի հմտությունը և միջմշակույթային փոխըմբռնումը:
- Երկկողմանի ներթափանցման ծրագիրը, լեզվի ուսուցման և կրթական ուսուցում է իսպանախոս, ինչպես նաև անգլիախոս երեխաների համար: Դասավանդման լեզուն իսպաներենն է, մանկապարտեզում դասավանդման 10% կատարվում է կրթական անգլերենով, 20% 1-ին և 2-րդ դասարաններում և ավելանում է ամեն տարի մինչև 50%՝ 5-րդ դասարանում: Այս ծրագրի նպատակն է հմտություն տալ անգլերենով և իսպաներենով լեզուներով, ինչպես նաև միջմշակույթային փոխըմբռնում:

ELD ուսուցում

Անգլերեն Լեզվի Զարգացումը (ELD) օգնում է աշակերտներին ձեռք բերել կրթական Անգլերեն լեզու լսելու, խոսելու, ընթերցանության և գրավոր աշխատանքի ոլորտներում: Յպւրաքանչյուր դպրոց որոշում է, թե ինչպես կատարել նշանակված ELD դասավանդում, հիմնվելով աշակերտի հմտության մակարդակի վրա: Չնայած որ ELD դասի ժամի սահմանափակում չկա, մեր շրջանը սահմանել է օրական ELD դասի հետևյալ դասաժամը.

- Անցումային մանկ. և մանկապարտեզ. 20 րոպե
- 1-5-րդ դասարան. 30 րոպե



Անգլերեն սովորողների ճանաչման գործընթաց

Մայրենի լեզվի հարցաթերթիկը լրացվում է երեխային Կալիֆոռնիայի Նահանգի պետական դպրոցում արձանագրելու ժամանակ:* Եթե #1, #2 կամ #3 հարցերի պատասխանը անգլերեն լեզվից բացի մեկ այլ լեզու է, ձեր երեխան կհանձնի Կալիֆոռնիայի Նահանգի Անգլերեն Լեզվի Հմտության սկզբնական քննությունը** (ELPAC) դպրոց սկսելու 30 օրվա ընթացքում, անգլերեն լեզվի զարգացման (ELD) աշխատակցի կողմից: Այն չափում է երեխայի անգլերեն լեզվի իմացության մակարդակը լսելու, խոսելու, կարդալու և գրավոր աղխատանքի ոլորտներում:

ELPAC սկզբնական քննությունը, հանձնելուց հետո, կարելի է ստանալ 2 հնարավոր արդյունք.

1) Ձեր երեխան ունի անգլերեն լեզվի բավարար հմտություն.
   - Դուք նամակ կստանաք նրա սահուն լինելու վերաբերյալ (IFEP):
   - Ձեր երեխան չի ստանա ELD ծրագրի ծառայություններ կամ ուսուցում:

2) Ձեր երեխայի քննության ընդհանուր արդյունքը պահանջվող հմտության մակարդակից ցածր է.
   - Դուք նամակ կստանաք, որտեղ կնշվի, որ ձեր երեխան անգլերեն լեզու սովորող է (EL):
   - Ձեր երեխան կստանա ELD ծրագրի ծառայություններ, որը նշանակում է, որ նա լրացուցիչ օգնություն կստանա դասարանի ուսուցչի կողմից կամ էլ ELD օգնականի կողմից մինչև վերադասակարգվելը:
   - Այս արդյունքների շնորհիվ ձեր երեխայի ուսուցիչը չի փոխվի:

*Եթե ձեր երեխան արձանագրված է եղել Կալիֆոռնիայի Նահանգի մեկ այլ դպրոցում, ապա մենք կպահպանենք նրա լեզվի Iսահունության նշանակումը:

**Հյուրընկալել www.elpac.org կայքէջը հավելյալ տեղեկությունների համար:

Ո՞վ է դասավանդում ELD:

Դասարանի ուսուցչի պարտականությունն է դասավանդել ELD ծրագիրը և այն իրականացնում են բազմաթիվ մեթոդների օգնությամբ: Աշակերտների խմբերը կարող են փոփոխվել օրեցօր կամ էլ դասից դաս, կախված լինելով դասի կամ դասավանդման կարիքներից: Օրինակ.

- Ուսուցիչը դասավանդում է ամբողջ դասարանին (ուղղակի ուսուցում), հետո պարապում անգլերեն սովորողների փոքր խմբի հետ:
- Ուսուցիչը , 20-30 րոպե պարապում է անգլերեն սովորողների հետ, իսկ մյուսները աշխատում են ինքնուրույն:
- Ուսուցիչը պարապում է անգլերեն սովորողների հետ ընթերցանության կամ գրավոր աշխատանքի ժամին, որպես փոքր խմբի տարբերակված պարապմունք:
- Ուսուցիչը դասավանդում է 30 րոպե ELD դաս և 30 րոպե միջամտության դաս կամ հարստացման դաս "Power Hour" դասի ընթացքում:

Ինչպե՞ս կարող եմ ծանոթանալ երեխայիս կատարած առաջընթացի հետ:

Ձեր երեխան, ամեն տարի գարնանը, կհանձնի ELPAC ամփոփիչ քննությունը առաջընթացը չափելու համար, մինչև վերադասակարգվելը: Ուսումնական տարվա ընթացքում, ELD մասնագետները աշխատում են ուսուցիչների հետ աշակետի առաջընթացը պաշտոնապես և ոչ պաշտոնապես հսկելու համար: Լրացուցիչ տեղեկություն կարելի ստանալ ծնողական ժողովի ընթացքում:

Առաջընթացին հետևելու համար ԲԴՄԾ-ն օգտվում է.

- ELPAC կամ CELDT (մինչև 2018 թվականը) լեզվի հմտությունը չափող քննություններից
- Շրջանի ELD քննություններից/հենանիշներից
- Շրջանի Անգլերեն լեզգի (ELA) քննություններից
- Անկախորեն ստեղծված գրավոր աշխատանքի նմուշներից
- Դասարանի գնահատականներից
- 3-5-րդ դասարանցիների նահանգային քննություններից. CAASPP*

*Հուրընկալել www.cde.ca.gov/ta/tg/ca/sbacparentguides.asp կայքէջը լրացուցիչ տեղեկությունների համար